Պատմություն և մշակույթ 2024 № 21 (2)
History and Culture

https://doi.org/10.46991/hc.2024.21.2.020

The Development of the Idea of Freedom in the Literary-Philosophical Works of Sartre

Alvard Mayilyan
https://orcid.org/0000-0003-1276-1686
YSU Applicant
alvardmayilyan@gmail.com

Keywords: existentialism, memory, freedom, responsibility, society, being.

The article analyzes the evolution of Jean-Paul Sartre's interpretations of the idea of freedom, from the beginning to the end of his creative life.

The theory of absolute freedom, its transformation over the years, and its transformation into non-absolute freedom conditioned by responsibility and social consciousness are studied.

According to J.P. Sartre, the hypothesis of God's existence limits human freedom and responsibility. In his opinion, the existence of man repels even the existence of God.

The innovation of the article lies in the fact that although the idea of freedom in Sartre's various works has been studied well, the development and transformation of this idea from one work to another have not been studied until now.

Ազատության գաղափարի զարգացումը Սարտրի գրական-փիլիսոփայական ուղու ընթացքում

Ալվարդ Մայիլյան
ԵՊՀ հայցորդ

Հիմնաբառեր՝ էքզիստենցիալիզմ, հիշողություն, ազատություն, պատասխանատվություն, հասարակություն, լինել:

Հոդվածում վերլուծվում է Ժան-Պոլ Սարտրի՝ ազատության գաղափարի մեկնությունների էվոլյուցիան՝ իր ստեղծագործական ուղու սկզբից մինչև ստեղծագործական կյանքի մայրամուտ:

History and Culture Vol.-21(2), 2024, pp. 20-28.

Received: 21.09.2024
Revised: 06.10.2024
Accepted: 20.11.2024

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2024

Ուսումնասիրվում են բացարձակ ազատության տեսությունը, նրա ձևափոխումը տարիների ընթացքում ու պատասխանատվությամբ ու սոցիալական գիտակցությամբ պայմանավորված ոչ բացարձակ ազատության փոխակերպումը:

Ըստ Ժ. Պ. Սարտրի՝ Աստծո գոյության վարկածը, սակայն, սահմանափակում է մարդու ազատությունն ու պատասխանատվությունը. մարդու գոյությունը ետ է մղում նույնիսկ Աստծո գոյությունը:

Հոդվածի նորարարությունն այն է, որ թեև ազատության գաղափարը Սարտրի տարբեր ստեղծագործություններում բավականին ուսումնասիրված է, սակայն այդ գաղափարի զարգացումն ու ձևափոխումը մի ստեղծագործությունից մյուսը մինչ օրս ուսումնասիրված չեն:

Развитие идеи свободы на литературно-философском пути Сартра

Алвард Маилян
ЕГУ Соискатель

Ключевые слова: экзистенциализм, память, свобода, ответственность, общество, бытие.

В статье анализируется эволюция трактовок Жан-Полем Сартром идеи свободы от начала его творческого пути до заката его творческой жизни.

Изучается теория абсолютной свободы, ее трансформация с годами и превращение в неабсолютную свободу, обусловленную ответственностью и общественным сознанием.

По мнению Ж. П. Сартра, гипотеза существования Бога ограничивает свободу и ответственность человека. Он придерживается мнения, что существование человека отталкивает даже существование Бога.

Новизна статьи заключается в том, что хотя идея свободы в различных произведениях Сартра достаточно изучена, развитие и трансформация этой идеи от одного произведения к другому до сих пор не изучены.

* * *

Ներածություն: Անհատի ազատության խնդիրը ֆրանսիացի փիլիսոփա, գրող ու դրամատուրգ Ժան-Պոլ Սարտրի փիլիսոփայության և գրական գործունեության հիմնական թեմաներից մեկն է: Ժան-Պոլ Սարտրը նախապատերազմյան տարիներին բացահայտ ապաքաղաքական էր, սակայն ամեն ինչ փոխվեց 1940-ական թթ. սկզբից: Նա սկսեց ակտիվորեն հետաքրքրվել քաղաքական կյանքով, մասնակցել դիմադրության շարժմանը: 1940-1950-ական թթ. վերջին Սարտրը ձգտում էր ստեղծել մի կուսակցություն, որը կմիավորեր ձախ մտավորականությանը: Պաշտպանում էր համագործակցությունը ֆրանսիական կոմունիստների հետ, երկու անգամ այցելել էր ԽՍՀՄ, համակրել Կուբայի հեղափոխությանը, դատապարտել ֆրանսիական գաղութատիրությունն ու Վիետնամի պատերազմը: Ֆրանսիայում 1968 թ.

ուսանողական անկարգությունների ժամանակ Սարտրը ապստամբ երիտասարդության հայտնի կուռքն էր:

Իր փիլիսոփայության հիմնական գաղափարը համարելով ազատությունը՝ Ժան-Պոլ Սարտրը վիթխարի ազդեցություն է ունեցել Ֆրանսիայի և մյուս եվրոպական երկրների հոգևոր կյանքի վրա, նրա ստեղծագործությունները մեծ արձագանք են գտել փիլիսոփայության ու քաղաքականության, գեղագիտության ու գրականության, թատրոնի ու կինոյի մեջ:

Սարտրի համար անհատի ազատությունը հիմնական արժեքներից մեկն է, որն անհատը պետք է պահպանի և պաշտպանի: Իր վաղ շրջանի ստեղծագործություններում նա պնդում է, որ մարդը պետք է զերծ լինի արտաքին ճնշումներից ու սահմանափակումներից, քանի որ դա թույլ է տալիս հասնել ինքնակատարելագործման ամենաբարձր աստիճանին, ինչն էլ իր հերթին բացարձակ ազատության գրավականն է: «Մարդը միշտ ազատ է ընտրելու իր վերաբերմունքը հանգամանքներին»[Sartre l'etre et le neant]:

Ըստ Ժ. Սարտրի՝ Աստծո գոյության վարկածը, սակայն, սահմանափակում է մարդու ազատությունն ու պատասխանատվությունը. նրա կարծիքով մարդու գոյությունը ետ է մղում նույնիսկ Աստծո գոյությունը, քանի որ «մարդն առանց որևէ հենարանի և առանց որևէ օգնության ամեն վայրկյան դատապարտված է մարդ ստեղծելու»[Sartre, L'homme est condamné à être libre]: Հետևաբար Սարտրի աթեիզմը ոչ թե Աստծո գոյության ժխտման, այլ նրա էության միջամտության հերքումն է. Սարտրը չի հերքում Աստծո գոյությունը, բայց վստահ է, որ Աստված ոչ մի կերպ չի միջամտում երկրային գործերին: Սարտրի հույսը մարդ արարածն է. այս են վկայում դժոխքը պատկերող «Դռնփակ» և դրախտը նկարագրող «Վերջին հնարավորություն» ստեղծագործությունները. երկու երկերում էլ մենք տեսնում ենք հոգու անմահության գաղափարըz:

«Էքզիստենցիալիզմը հումանիզմ է» աշխատության մեջ Սարտրը գրում է. «Նա, ով մեղադրում է ուրիշներին իր անազատության մեջ, հրաժարվում է իր ազատությունից» [Sartre J., 1986]: Այս միտքը տվյալ ստեղծագործության մեջ այլևս չի զարգանում, սակայն դրա լավագույն ապացույցը մենք տեսնում ենք «Դռնփակ» պիեսում, որում հերոսները, դադարելով միմյանց մեղադրել, հանգում են համակերպման ու հոգու ազատության: Այս է փաստում այն հատվածը, որ թեև փակ սենյակի դուռը բացվում է, սակայն ոչ ոք դուրս գալու ցանկություն այլևս չի ունենում:

Ազատության գաղափարը: Հատկանշական է Սարտրի վերաբերմունքը Աստծո ու կրոնի նկատմամբ հենց ազատության գաղափարի ուսումնասիրման տեսանկյունից: Խոսելով փիլիսոփայական ռացիոնալիզմի դեմ՝ նա իր դիրքորոշումն անվանում է հետևողականորեն աթեիստական և իր փիլիսոփայության խնդիրներից մեկը տեսնում է անհետևողական աթեիզմի քննադատության մեջ: Նման աթեիզմը, քննադատելով կրոնը, ինքնաբերաբար հայտնվում է նրանից ներքին կախվածության մեջ: Դա պայմանավորված է ինքն իրենով լինելու ռացիոնալ հավատով: Քրիստոնեության անձնավորված Աստծո ժխտումն այստեղ վերածվում է ոչ անձնավորված Աստծո՝ որպես այս աշխարհիկ աշխարհի կառուցվածքի և իմաստի ստեղծարարի հաստատման: Այս վերաբերմունքը հասնում է գագաթնակետին Աստծո ու բնության նույնականացումով՝ պանթեիզմով:

Այսպիսով, ըստ Սարտրի, մեզ անհրաժեշտ է ազատվել աշխարհի կարգուկանոնի, նրանում քարացած երևույթների առկայության մասին ցանկացած պատկերացումներից: Միայն այսկերպ կարելի է հասնել աշխարհի անաստվածությանը: Լինել իրական նշանակում է խորթ լինել գիտակցությանը, լինել բոլորովին «պատահական»: Մարդու վարքագծի գաղտնիքը նրա բացարձակ անպայմանականության, անկախության, ինքնաբուխության մեջ է: Աստծուց Սարտրին մնում է միայն մարդուն ուղղված հայացքը՝ ծակող ու ամենուր մարդուն գիտակցության խորքից դիտող: Դա այդ «ուրիշն» է, ով կամ ովքեր պարզապես մարդիկ կամ նույնիսկ մարդկությունը չեն:

Մերժելով Աստծո հանդեպ հավատը՝ Սարտրը դնում է անհատի նույն բացարձակ ազատությունը՝ որպես իր էթիկական հայեցակարգի հիմք: Ուստի մարդն է բարոյականության միակ աղբյուրը, չափանիշն ու նպատակը, յուրաքանչյուր առանձին մարդու համար իր «եսը»: Մարդու անձնական ազատությունը բարոյական արժեքների միակ հիմքն է: Այսպիսով, օգտագործելով ազատությունը՝ մարդը պետք է լինի այնպիսին, ինչպիսին իրեն ստեղծել են: «Ազատությունը նրանում չէ, որ դու հնարավորություն ունենաս անելու այն, ինչ ուզում ես, այլ անես այն, ինչ ուզում ես» [Sartre l'etre et le neant]: Այս պարագայում, իհարկե, բարոյական նորմերի ընդհանուր վավերականության, սոցիալականության տեղ չկա, և արդեն կարևոր չէ մարդն ունի հնարավորություն անելու այն, ինչ ուզում է, թե ոչ: Բացարձակ ազատությունն այն է, երբ մարդ ազատ է անելու այն, ինչ ուզում է՝ անկախ նրանից՝ ունի դրա հնարավորությունը, թե ոչ:

Ազատության գաղափարը նա ներկայացնում է որպես մի բացարձակ, մարդուն ի ծնե տրված անբաժանելի մասնիկ («Մարդուն վիճակված է ազատ լինել») [Sartre J.-P, 1986], որը նախորդում է մարդու էությանը: Սարտրի ազատությունը ոչ թե հոգու ազատությունն է, որը անգործություն է ծնում, այլ մտքի ազատությունը, որից մարդուն ոչ ոք չի կարող զրկել. կալանավորը ազատ է որոշումներ կայացնել, հաշտվել կամ պայքարել իր ազատության համար, իսկ թե ինչ կլինի հետո, կախված է հանգամանքներից, որոնք փիլիսոփայի իրազեկությունից դուրս են: «Մարդը լիովին ազատ է և պատասխանատու է իր արածի համար» [Sartre l'etre et le neant]: «Կեցություն և ոչինչ» ստեղծագործության մեջ արտահայտած այս միտքը շրջադարձային է արդեն դառնում բացարձակ ազատության տեսության համար: Պատասխանատու լինելը սոցիալական մարդու համար ստեղծում է մի շարք սահմանափակումներ:

Կամքի ազատության ըմբռնումը Սարտրի մոտ հանդես է գալիս «նախագծի» տեսության մեջ, ըստ որի՝ անհատը նախապես ձևավորված չէ, այլ ինքն է իրեն նախագծում, որոշում ինչպիսին լինել, այդ իսկ պատճառով էլ հենց նա է պատասխանատու իր ու իր արարքների համար: Իր «Էքզիստենցիալիզմը հումանիզմ է» [L'existentialisme est un humanisme, 1946] փիլիսոփայական երկում ֆրանսիացի պոետ ու էսսեիստ Ֆրանսիս Պոնժի խոսքերը որպես մեջբերում անելով՝ Սարտրը հաստատում է՝ «մարդու ապագան մարդն է» [Sartre J.-P, L'existentialisme est un humanisme, Collection Pensees, Paris, 1986, p.44]:

Միայն տարածաժամանակային տեղափոխումից ու սահմանային իրավիճակում հայտնվելուց հետո է հերոսի անձը աճում, բարձրանում է մինչև անհատականության աստիճանի և ըմբռնում իր անկախությունը՝ ձեռք բերելով «իրական ազատություն», ազատություն հոգևոր ոլորտում, որտեղ էլ պետք է ընտրի և գնահատի իր բարոյական վարքագիծը: Մինչդեռ հասարակությունը, որը միայն արտաքին, նյութական գոյության հնարավորություն է տալիս մարդուն, սահմանափակում է մարդու ազատությունը և նրա բարոյական ընտրության իրավունքը:

Անձի հոգևոր ինքնուրույնության, ազատության և բարոյական պատասխանատվության ուսմունքով էքզիստենցիալիզմը հակադրվում է հասարակության մեջ անհատականության կործանմանը, մարդկային հարաբերությունների ոչ բարոյական դրսևորմանը, շահամոլությանը, դավաճանությանը, բարոյական արժեքների անկմանը: Այստեղ արդեն բացարձակ ազատությանը փոխարինելու է գալիս նախապայմաններով ազատությունը «Մենք ազատագրված ենք ամեն ինչից՝ բացի ազատությունից…: Մենք ազատ ենք ընտրելու, բայց ազատ չենք չընտրելու» [Jean-Paul Sartre Huis clos suivi de Les Mouches]:

Հարկ է նշել, որ Սարտրը սահմանագիծ է գծում ազատության մասին սովորական ու էքզիստենցիալիստական ընկալումների, հասկացությունների միջև: Ազատության սովորական գաղափարը ենթադրում է իր կապը նպատակի գործնական իրականացման հետ, իսկ էքզիստենցիալիստական ըմբռնումը վերաբերում է ընտրության ազատությանը, մարդու ազատության անճշտությանը: Մարդը, որը տեղյակ է իր ազատության մասին, մշտապես դժգոհ է իր իրավիճակից և ձգտում է հաղթահարել ճանապարհին հանդիպող դժվարությունները: Եթե մինչ «Վերջին հնարավորությունը» կինովեպը Սարտրը խոսում էր բացարձակ ազատությունից, ապա այստեղ, ներառելով ազատության չհասնելու սոցիալական պատճառները, ուսումնասիրության է ենթարկում ազատությունը սոցիալական անհրաժեշտության տեսանկյունից. «Ազատությունը պատասխանատվության գիտակցումն է» [Жан-Поль Сартр - Ставок больше нет [litres]]:

Հանդերձյալ աշխարհի մասին իր երկու ստեղծագործություններում էլ Սարտրն ընթերցողի առաջ դնում է այնպիսի հարցեր, որոնք մինչ այժմ մնում են թե՛ նրա ստեղծագործության ամենակարևորները, թե՛ ընթերցողի համար հավերժականները: Կենտրոնում ընտրության ու պատասխանատվության, գործած արարքների համար մեղքի զգացողության հարցերն են: Դրա առնչվում է ազատության ու անազատության հարցը: Վեպերի գլխավոր կոնֆլիկտը կարելի է որոշել հետևյալ կերպ. ազա՞տ է ընտրանքը, արդյո՞ք գոյություն ունի ընտրելու ազատություն, թե՞ դա միայն մարդու մտքի ճակատագրական խեղաթյուրանքն է: Իսկ եթե ընտրության ազատություն, այնուամենայնիվ, գոյություն ունի, ապա ո՞րն է նրա իմաստը: Այսպիսով՝ բացարձակ ազատությունը սոցիալական պատասխանատվություն ունեցող մարդու մոտ հեռանում է հետևյալ գաղափարից. «Ազատությունն այն է, որ ընտրել ենք, թե ինչ ենք անում այն ամենի հետ, ինչ արել են մեզ հետ» [Jean-Paul Sartre Huis clos suivi de Les Mouches]:

Սարտրի փիլիսոփայությունը ձևավորվել է Հուսերլի, Հայդեգերի ու Հեգելի գաղափարների ազդեցությամբ: Իր «Էքզիստենցիալիզմը հումանիզմ է» (1946 թ.) աշխատության մեջ ֆրանսիացի մտածողը հայտարարում է, որ «նույնիսկ եթե Աստված չկա, ապա կա առնվազն մեկ էակ, որի գոյությունը հնարավոր է սահմանել որևէ հայեցակարգով, և այդ էակը մարդն է» [Jean-Paul Sartre Huis clos suivi de Les Mouches]:

Լինելը, ըստ Սարտրի, մարդկային իրականության մեջ դրսևորվում է երեք ձևերով՝ «ինքն իրենում լինել», «ինքն իրեն համար լինել» և «ուրիշի համար լինել»: Սրանք մեկ մարդկային իրականության երեք կողմերն են, որոնք կիսվում են միայն վերացականության մեջ: Աշխարհում «ինքնին լինելուն» մարդն ընդդիմանում է որպես մաքուր «ինքն իրեն համար լինել»: «Իր համար

լինելը» ինքնագիտակցության անմիջական կյանքն է և մաքուր «ոչինչ» է աշխարհի համեմատ: Այն կարող է գոյություն ունենալ միայն որպես վանող, ժխտում, որպես այդպիսին լինելու «անցք»:

«Ուրիշի համար լինելը» բացահայտում է միջանձնային հարաբերությունների հակամարտությունը: Ինքնագիտակցության սուբյեկտիվությունը արտաքին օբյեկտիվություն է ձեռք բերում միայն այն ժամանակ, երբ անհատի գոյությունը մտնում է հորիզոն՝ մեկ այլ գիտակցության տեսադաշտում: Իսկ մյուսի նկատմամբ վերաբերմունքը Սարտրի տեսանկյունից պայքար է դիմացինի աչքում անհատի ազատության ճանաչման համար:

Առարկելով Հայդեգերին՝ Սարտրը հայտարարում է, որ մարդն ու գոյությունը պետք է ի սկզբանե նկարագրել՝ գիտակցությունը նկատի ունենալով, քանի որ գիտակցությունը մարդու չափանիշն է (ի դեպ, ո՛չ Սարտրը, ո՛չ Հայդեգերը իրենց իդեալիստ չեն համարել: Ավելին, Հայդեգերն իր փիլիսոփայությունն անգամ էքզիստենցիալիստական չի համարում):

Գիտակցությունը, ըստ Սարտրի, ոչնչից չի բխում. այն տարբերվում է աշխարհի մյուս բոլոր երևույթներից ու գործընթացներից: Դա գոյության միջոցով առաջացած ու նրա միջոցով իրականացվող մարդու գոյության անհատական փորձն է: Գիտակցությունը ոչինչ է այն առումով, որ չկա այնպիսի «տվյալություն», որի մասին կարելի է ասել, որ դա գիտակցություն է: Գիտակցությունը գոյություն ունի միայն որպես գիտակցություն այն բանի մասին, որին այն ուղղված է: Բայց ինչ-որ բանի գիտակցությունը միևնույն ժամանակ ինքն իր գիտակցությունն է, որը տարբերվում է նրանից, որին այն ուղղված է:

Սարտրի փիլիսոփայության մեջ որոշիչ դեր է խաղում «ոչինչ» հասկացությունը (պատահական չէ, որ նրա հիմնական փիլիսոփայական աշխատությունը կոչվում է «Կեցություն և ոչինչ»): «Ոչինչը» նախևառաջ մատնանշում է գիտակցության ու մարդու գոյության հատուկ ձևը: Հենց գիտակցության՝ որպես ոչինչի ընկալման հիման վրա Սարտրը սահմանում է նրա այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են ազատությունը, ժամանակավորությունը, անհանգստությունը, պատասխանատվությունը և այլն: Այսինքն՝ մարդկային իրականությունն այնպիսին է, որ գոյություն ունի: Աշխարհը սկսեց «գոյություն ունենալ» միայն գիտակցության գալուստով: Գիտակցության ու մարդկային իրականության գոյությունը փաստ է, որի հիման վրա Սարտրն ուղղակիորեն հաստատում է ոչնչի նկատմամբ լինելու գերակայությունը: Ոչինչ հնարավոր չէ, քանի որ գոյություն ունի: Բայց սա չի նշանակում, որ գիտակցությունը գոյանում է լինելուց. լինելը գիտակցության պատճառը չէ: Եվ, ընդհանրապես, նման խնդիրը, լինելով մետաֆիզիկական, Սարտրի տեսանկյունից ոչ միայն անլուծելի է, այլև անիմաստ: Գիտակցությունը հստակորեն սահմանափակում է բացարձակ ազատության գաղափարը, արգելակում անմտածված ու հախուռն ազատության վայելքը. «Ազատությունն այն է, ինչ դու անում ես քո սահմանափակումների հետ» [Sartre l'etre et le neant, 14-20]:

Պոլ Ռիկյորի «Ես ինքս որպես ուրիշ» («Soi-même comme un autre») ստեղծագործությունը կարծես արձագանք լինի Սարտրի գոյաբանական հայեցակարգին: Սակայն սա Ռիկյորի առաջին արձագանքը չէր Սարտրի աշխատանքին. 1951 թ. գրաքննադատը ակնարկ է գրում Սարտրի «Սատանան և բարի Աստվածը» պիեսի վերաբերյալ, որին անմիջապես արձագանքում է Սարտրը: 1981 թ. լույս է տեսնում Ռիկյորի «Սարտրը և Ռայլը երևակայության մասին» հոդվածը, որից հետո Ռիկյորն այլևս ոչինչ չի գրում Սարտրի մասին՝ բացառությամբ մի քանի դիտողությունների՝ սփռված տարբեր աշխատություններում:

Ռիկյորի ու Սարտրի երևակայական սահմաններն ու աշխարհայացքը, փիլիսոփայությունն ու քննադատական միտքն իրականում այնքան էլ միմյանցից հեռու չեն, որքան կարող է թվալ վերոնշյալ քննադական ստեղծագործությունները ընթերցելիս: Երևակայության մասին Սարտրի ու Ռիկյորի հայեցակարգերը հակադրված չեն միմյանց, ինչպես փորձում է ներկայացնել Ռիկյորը: Երևակայությունը, ըստ Ռիկյորի, ինչ-որ չափով «հիբրիդային գիտակցություն է», քանի որ ամփոփում է մարդկային գործունեության երկու տեսակ՝ «մտածել ու տեսնել»: Սարտրի փիլիսոփայության հիմքում էլ հենց մտածելն ու տեսնելն է. այս դրույթն է հենց դառնում երկու էապես հակադիր փիլիսոփայությունների պատահական նմանություն կամ ընդհանրապես անհամեմատելի հասկացությունների համեմատություն: Երիտասարդության տարիներին Ռիկյորը ցանկանում էր լինել «լավ էքզիստենցիալիստ»՝ ի տարբերություն Սարտրի, որն իրեն համարում էր «սխալ էքզիստենցիալիստ». «Իմ կարծիքով Սարտրի ու Ռիկյորի նմանությունները ապշեցուցիչ են, իսկ տարբերությունները՝ աննշան, և այս տարբերությունների էությունն այն է, որ հենց Սարտրն է փիլիսոփայական ու գաղափարական սոլիպսիզմի ամենակարկառուն ներկայացուցիչը» [Сартр и Рикер о времени и месте принятия решения]: Սարտրը, հասնելով ընդհուպ մինչև սուբյեկտիվ իդեալիզմ, կարծում էր, որ միակ իրականությունը մարդու սեփական գիտակցությունն է, իսկ արտաքին աշխարհը գոյություն ունի այնքանով, որքանով այն արտացոլվում է այդ գիտակցության մեջ:

Զարմանալի է այն փաստը, թե ինչու իր «Ժամանակ և պատում» եռագրության մեջ, խոսելով եռաշերտ ներկայից, որի վերջին դրսևորումն ապագան է, Պոլ Ռիկյորը որպես օրինակ նշում ու ուսումնասիրում է Հայդեգերի ապագան՝ անտեսելով Սարտրի ստեղծած տարածաժամանակային ավելի բարդ մոդելը: Այս ճանապարհով է գնում նաև Սարտրը, որը, թողնելով Հուսերլի ֆենոմենոլոգիական դպրոցը, անցնում է հայդեգերականության միջով՝ այն հաղթահարելով դեկարտյան կոգիտոյի օգնությամբ: Ավելի կոնկրետ՝ և՛ Սարտրը, և՛ Ռիկյորն իրենց աշխատություններում ապավինում են Դեկարտի ձևակերպած «անվերջ-վերջ» հակադրությանը՝ տարբեր եզրակացություններ անելով: Ե՛վ Սարտրի, և՛ Ռիկյորի փիլիսոփայության հերոսը ոչ միայն գործի մարդ է, այլև «վճռորոշ մարդ» (ըստ Սարտրի) կամ «նախաձեռնող մարդ» (ըստ Ռիկյորի): Ավելին, սկզբնական ժամանակային եղանակը, ըստ Սարտրի, ներկան է, որն ուղղակիորեն մոտեցնում է նրա տեսակետը Օգոստինոսի դիրքորոշմանը, որի ժամանակի ֆենոմենոլոգիան շարունակում է Ռիկյորը: Վերջապես, կա գրականության ու փիլիսոփայության փոխհարաբերության հարցը: «Ժամանակ և պատում» («Temps et Recit») աշխատության մեջ Ռիկյորը սկսում է լայնորեն կիրառել գրական փաստարկներ: Ավելին, Սարտրն ու Ռիկյորն ունեն «գրական ստեղծագործության մեկ չափանիշ»՝ Մարսել Պրուստի «Կորուսյալ ժամանակի որոնումներում» երկը, որը Ռիկյորը համարում էր ժամանակի բազմամակարդակ կառուցվածքն ու դրա առեղծվածը լավագույնս արտացոլող ստեղծագործություն, որն էականորեն ազդել է Սարտրի էքզիստենցիալիզմի այնպիսի կողմերի վրա, ինչպիսին են «ես»-ի ու «մյուսի» հարաբերությունները, մասնավորապես սիրային պատկերների նկարագրության տեսքով): Մարսել Պրուստը մեծ ազդեցություն է ունեցել նաև Սարտրի տեսության վրա երևակայականի ու իրականի միջև փոխհարաբերությունների

պատկերման առումով, ինչպես նաև որոշ չափով Սարտրի ժամանակավորության տեսության վրա (հետահայաց պատկերում ժամանակը ետ տալու կամ կանգնեցնելու հնարները):

Իր ստեղծագործության մայրամուտին Սարտրը, հրաժարվելով բացարձակ ազատության իր նախնական գաղափարից, հաստատելով Ռիկյորի վերոնշյալ պնդումները, նշում է, որ մարդու գործողությունը, օրինակ, միշտ ունի որևէ դրդապատճառ, բայց գործողությունն անխուսափելիորեն դրանից չի բխում, այսինքն՝ գործ ունենք սկզբի (պատճառ) հետ, որն էլ իր հերթին կախված է արտաքին գործոններից, իսկ շարունակության պատճառները (հետևանք) կախված են մեկնաբանության եղանակից: Գործողությունը, ըստ Ռիկյորի, միշտ ունի իր պատճառը, որում անձը կարող է կասկածել միայն գործողությանը հաջորդող իրականության արտացոլման ժամանակ: Կարելի է ասել, որ գործողությունն ունի իր ճշմարտությունը, հետևաբար այն իր սպեկտրով ավելի լայն ժեստ է, քան cogito-ի ակտը, որը փորձում է ընդունել այն, բայց միևնույն ժամանակ անխուսափելիորեն նեղացնում և նույնիսկ ժխտում է դրա իմաստը. cogito-ն ներկա է սահմանման մեջ, այլ ոչ գործողության: Ռիկյորն այս գաղափարը զարգացնում է «Տեքստից մինչև գործողություն» աշխատության մեջ՝ ասելով, որ Սարտրը թերագնահատում է.

ա. մարմնի միջնորդավորված մասնակցությունը որոշումների կայացման իրավիճակում (օրինակ՝ երբ ես որոշում եմ՝ որտեղ անցկացնել արձակուրդս կամ նստել՝ ենթարկվելով հոգնածությանը),

բ. ինքնաբուխության գործոնը (գրկում եմ ընկերոջս, որին վաղուց չեմ տեսել),

գ. սովորությունը և այլն [Ricoeur P., Du texte à l'action. Essais d'herméneutique II, Seuil, 1986, Point Essais, 1998] :

Բացի դրանից՝ Ռիկյորը նշում է, որ Սարտրը պատշաճ նշանակություն չի տալիս որևէ որոշման շարունակականությանը, այն է՝ որոշումը որպես գործընթաց՝ ընդգծելով դրան բնորոշ բացը, որն անխուսափելիորեն միակողմանի է դարձնում մարդկային արարքի նրա մեկնաբանությունը:

Այսպիսով, ըստ Սարտրի՝ անձնական ազատությունը գալիս է անխուսափելի պատասխանատվության զգացումից: Մարդը պետք է պատասխանատու լինի իր գործողությունների ու ընտրությունների համար, քանի որ դրանք որոշում են նրա կյանքը և ազդում այլ մարդկանց կյանքի վրա, իսկ մարդն իր էությունը ձեռք է բերում միայն իր ազատ գործողություններով:

Ստեղծագործական ուղու սկզբում լինելով բացարձակ ազատության ջատագով՝ ստեղծագործական ուղու մայրամուտին Սարտրը համաձայնում է, որ անհատի ազատությունը բացարձակ ու անսահման չէ: Մարդը միշտ սահմանափակված է արտաքին հանգամանքներով, սոցիալական ու քաղաքական գործոններով, ինչպես նաև իր անձնական հնարավորություններով: Սակայն նույնիսկ նման պայմաններում մարդը պետք է պահպանի ընտրության իր ազատությունը և պատասխանատվություն կրի իր արարքների համար:

Միևնույն ժամանակ անհատի ազատությունը փիլիսոփայական խորը իմաստ ունի. ազատությունը ոչ միայն ընտրության հնարավորություն է, այլ նաև անխուսափելի գիտակցում, որ մարդը պատասխանատու է իր կյանքի համար և ունի այն փոխելու կարողություն:

Այսպիսով՝ Սարտրի փիլիսոփայության մեջ անհատական ազատության խնդիրը ամենակենտրոնական ու արդիականներից մեկն է: Նրա համար անհատի ազատությունը կարևորագույն հասկացություններից է, որը որոշում է նրա էությունը և թույլ է տալիս հասնել

ինքնակատարելագործման ամենաբարձր աստիճանի: Սակայն Սարտրը նաև շեշտում է, որ յուրաքանչյուր մարդ սոցիալական էակ է, որ նրա գոյությունը միշտ կապված է այլ մարդկանց հետ: Մարդը չի կարող ապրել մեկուսացված, և նրա ազատությունը միշտ սահմանափակվում է այլ մարդկանց ազատությամբ: Ուստի նա պնդում է, որ յուրաքանչյուր մարդ որոշումներ կայացնելիս պետք է հաշվի առնի այլ մարդկանց շահերը և չմոռանա իր սոցիալական պատասխանատվության մասին: Սարտրի համար լինել իր համար նշանակում է գիտակցել սեփական ազատությունը, պատասխանատվությունն ու սոցիալական կապը:

Գրականության ցանկ

Монин М. А., Сартр и Рикер о времени и месте принятия решения, Текст научной статьи по специальности «Философия, этика, религиоведение» https://cyberleninka.ru/article/n/sartr-i-riker-o-vremeni-i-meste-prinyatiya-resheniya.

Кандалинцева Л. Е. - Проблема свободы и выбора во французском экзистенциализме (Ж. П. Сартр, А Камю) Журнал: Философия и общество. Выпуск №2(23)/2001 https://www.socionauki.ru/journal/fio/archive/2001_2/.

Левченко Е.В., 2005, Художественное творчество как переживаемое бытие // Вопросы философии. с. 145.

Сартр Ж.П., Последний шанс https://libcat.ru/knigi/proza/397998-37-zhan-pol-sartr-stavok-bolshe-net-litres.html#text.

Хализев В., Теория литературы https://royallib.com/book/halizev_valentin/teoriya_literaturi.html

Ricoeur P., Temps et Recit, Editions Larousse, Volume 3, p. 389.

Ricoeur P., Du texte à l'action. Essais d'herméneutique II, (Seuil, 1986 ; Point Essais, 1998) p. 231.

Sartre J.-P, 1986, L'existentialisme est un humanisme, Collection Pensees, Paris, p. 27.

Sartre J.P., L'etre et le neant Sartre L' Etre Et Le Neant : Free Download, Borrow, and Streaming : Internet Archive.

Sartre J.P., L'existence precede l'essence https://la-philosophie.com/sartre-existence-precede-essence.

Sartre J.P., L'homme est condamne a etre libre https://apprendrelaphilosophie.com/sartre-lhomme-est-condamne-a-etre libre/#:~:text=Sartre%20a%20une%20th%C3%A8se%20sur,peut%20pas%20ne%20pas%20choisir.

Sartre J.P., Huis Clos https://la-philosophie.com/wp-content/uploads/2012/12/Sartre-Huis-clos-Texte-complet-pdf.pdf.